

### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՊՐՆ. ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

**Հունվարի 3-ին, ուրբաթ օրը,** առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը Երևանում, Կառավարական տանը, պաշտոնական այցելություն է տալիս Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ պրն. Բադալ Մուրադյանին։

Հայոց Հայրապետի և Մինիստրների սովետի պրն. նախագահի միջև տեղի է ունենում սրտագին զրույց՝ ջերմ մթնոլորտում։

Զրույցին մասնակցում էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Կ. Դալլաքյանը։